Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆՅԱՆ

Տարվույս հուլիսի 26-ին վախճանվեցավ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանը:

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանը ծնվել է 1871 թվին, Սամաթիայում (Կ. Պոլիս): Վարդապետ է ձեռնադրվել 1898 թվին, ձեռնադրվել է եպիսկոպոս 1924 թ.: Հանգուցյալ պատրիարքը 55 տարիների իր անդուլ աշխատանքի մեջ ցույց տվավ կատարյալ անձնվիրություն և հավատարմություն հայոց եկեղեցուն և նրա կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, օգտակար ծառայություն Երուսաղեմի Ս. Հակոբա վանքին, որտեղ անց է կացրել իր հովվական կյանքի մեծ մասը:

Հանգուցյալ Սրբազան Պատրիարքի մահվան քոթը ծանր տպավորություն թողեց Ս. Էջմիածնի ողջ միաբանության վրա: Սրբազան Պատրիարքի թաղման օրը պատարագից հետո հոգեհանդիսատ կատարվեց Մայր Տաճարում Միաբանության և հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ: Ամենայն Հայոց Հայրապետության Տ. Տեղակալի կողմից անմիջական կարգադրություն եղավ բոլոր եկեղեցիներում հոգեհանդիսատ կատարելու հոգելույս Պատրիարքի մահվան առթիվ:

Սրբազան Պատրիարքի թաղումը տեղի ունեցավ Երուսաղեմում հուլիսի 30-ին: Հանգուցյալ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի թաղման նկարագիրը, տպված է «Զարթոնք» թերթը «Սուրբ օրեր» վերնագրով հուղիչ հոդվածի մեջ:

«...Ս. Հակոբայ Մայր Տաճարի մեծ զանգը ընդհատ ընդհատ դժժեց մահը Սրբ. Պատրիարքին, ցաւի ապրում անցաւ բոլոր հոգիներէն, ոչ ոք կասկածեցաւ ահռելի իրականութենէն:

Լուսարարապետը և վարդապետներ հատուկ իրենց սրտաճմլիկ վիճակին կը ձեռնարկեն անմիջական կարգադրութեանց: Հեռագիրներ կը ղրկուին Մայր Աթոռ, Անթիլիաս և Սիսիոնի թեմերուն: Մասնաւոր հեռագրով թաղման ներկայ գտնուելու կոչուելիներուն Կիլիկիոյ աթոռին Տեղակալ Խորէն Սրբազանը, Պաղեստինի Ռուբէն արքեպիսկոպոսը և Եղիպտոսէն Մամբրէ Սրբազանը: Մասնաւոր հաղորդագրութեամբ լուրը կը հաղորդուէր նաև Պաղեստինի ռատիո-կայանին, որ նոյն իրիկունն իսկ կը ցրուէր բոթը ամբողջ աշխարհին:

Ապա ներարկուելէ և պատանդուելէ վերջ, Սրբազանի մարմինը կը դեռեղուէր Պատրիարքարանի մեծ դահլիճի մէջ, ասուցյի կաղապարներու մէջև և ելնքարական հովհարներու տակ: Յաջորդ երեք օրերը անցան սուգի ծանր ճնշումի ներքև, Մահարդ ապագրուեցաւ եւ ղրկուեցաւ Պաղեստինի բոլոր պետական պաշտօնատարներու, հիւպատոսներու, եկեղեցւոյ պետերու և զանազան հասարակութեանց և անձնաւորութեանց: Ցաւակցական հեռագիրներ սկսան տեղալ ամէն կողմէն:

«Ուրբաթ օրը Ս. Աթոռ ժամանեցին հրաւիրուած եպիսկոպոսներէն Արտաւազդ Սրբազանը և Ռուբէն Սրբազանը Պաղեստէն: Իսկ շաբաթ օր եկան հասան Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոսը և Գահիրէէն՝ Մամբրէ Սրբազանը: Եղիպտոսէն իբրև ներկայացուցիչ եկած էր նաև Պ. Ճանիկ Զաքէրը, քաղաքական ժողովոյ ատենապետը, ինչպէս նաև հանգուցեալ Պատրիարքին սրտակից բարեկամը

ՄԵԾԵՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆՅԱՆ

մը՝ Տ. Հայկազուն քհն. Ոսկերիչեան եւ մեծանուն բանասեղծ Պ. Վ. Թէքէեան, որոնց օգտակարութեամբ Պաղեստին գալը կը զուգադիպէր այս տխուր առիթին:

«Շաբաթ երեկոյեան ժամը 5-ին, ամբողջ միաբանութիւնը թափորով Պատրիարքարան եկաւ, ուր կատարուեցաւ քահանայութիւնի «Տան Կարգը»: Ընկուղենի փառաւոր դագաղի մը մէջ կը հանդիսէր Սրբազանի մարմինը, զգեստաւորուած հայրապետական հանդերձանքով: Լուցեալ մոմերով, աղօթքով, խնկով եւ շարականի երգեցողութեամբ Սրբազան Պատրիարքին դագաղը-կերուած վեց վեղարաւորներէ-փոխադրուեցաւ եկեղեցի, պատկառելի հանդիսաւորութեամբ ժողովրդային համախումբ բազմութեան մը մէջէն: Դագաղին երեւումը յուզեց ամէնքը առհասարակ: Արցունք եւ ցաւային հծծիւններ բոլոր շրթներէ: Եկեղեցին արդէն զգեցած էր սուգի օրերու իր հանդերձանքը, կրկնակ աթոռները Տեառնեղբօր և Պատրիարքի սուգի քօղով շղարշուած էին: Առեանին մէջ տեղը դրուած էր բարձր, սեւածածկ պատուանդան մը, որուն չորս բոլորը բարձրադիր աչտանակներ սև երիզներով ժապաւիներով: Դագաղը դեռեղուեցաւ պատուանդանին վրայ: Ժողովուրդը, արցունքը աչքերուն, մոտեցաւ իր վերջին համբոյրը դրոշմելու սիրեցեալ հովուապետի սառած աչքին:

«Կիրակի առաւօտ կանուխ չորս վարդապետներ, դագաղին շուրջ լռելեայն քաղեցին չորս Աւետարանները: Ժամերգութիւնը կատարուեցաւ մեղմաձայն եւ վշտագին: Հանդիսական հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գեր. Տ. Ռուբէն Արք. Մանասեան: Ս. Պատարագի ընթացքին, «Ողջոյն»-էն առաջ, դագաղը բեմ հանուեցաւ, ուր Ռուբէն Սրբ. կատարեց վերջին օծման կարգը ընդհանուր յուզումի մէջ...»:

Հանգին Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանեանի հայ եկեղեցին կորցրեց իր անձնվեր ու ակտանոտոր մշակին: